




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


335  
 1192  
 3121 338.98

Ի. ՍՏԱԼԻՆ

# ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴԵՈՒՆԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ԱՐՏԱՍԵՆԱԾ ՀԱՌԸ)

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ



Հրատարակություն  
 Նոր-Բայազետի  
 Գրադարան. Նոյեմբեր

Տպարան Նոր-Բայազետի տեղ. տնտես. բաժնի


Նոր-Բայազետ 1932

-335-

Շքշխա № 207  
Տիրաժ 1500 որ.



3121- ԿԳ-Դ



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԿԱՆ ՔՅՈՒՂԵ-  
ՐՈՒՄ ՀՆԳԱՄՅԱԿԸ ԿԱՏԱՐԵԼ ՅԵՐԵԲ ՏԱՐՈՒՄ

Ընկերներ, ձեր կոնֆերենցիայի աշխատանք-  
ները վերջանալու վրա յեն: Այսօր դուք բանա-  
ձեղեր եք ընդունելու: Յես չեմ կասկածում, Վոր

դուք միաձայն կընդունեք այդ բանաձևերը: Այդ բանաձևերում—յես միքիչ ծանոթ եմ դրանց—դուք հավանություն եք տալիս արդյունաբերության 1931 թվականի կոնտրոլ թվերին և պարտավորություն եք ստանձնում կատարել վերջիններս:

Բայլշեիկի խոսքը լուրջ խոսք ե: Բայլշեիկները սովոր են կատարել իրենց տված խոստումները: Սակայն ի՞նչ ե նշանակում կատարել 1931 թվականի կոնտրոլ թվերը: Այդ նշանակում ե ապահովել արդյունաբերության արտադրանքի 45 տոկոս ընդհանուր աճումը: Իսկ դա մի խնդիր ե: Դեռ ավելին. այդպիսի պարտավորություն ստանձնելով, դուք վոչ միայն խոստում եք տալիս կատարել մեր 5-ամյակը 4 տարում, այդ արդեն վճռված գործ ե և այստեղ վոչ մի բանաձևի հարկավոր չե այլևս.— դա նշանակում ե, վոր դուք խոստանում եք արդյունաբերության հիմնական, վճռական նյութերում հնգալիսը կատարել 3 տարում:

Լավ ե, վոր կոնֆերենցիան խոստանում ե կատարել 1931 տարվա պլանը, կատարել հնգամյակը 3 տարում: Սակայն մենք «դառն փորձով» սովորել ենք, մենք գիտենք, վոր խոստումները միշտ չեն կատարվում: 1930 թվ. սկզբին նույնպես խոստում եր տրվել՝ կատարել տարեկան պլանը: Այդ ժամանակ հարկավոր եր ավելացնել

մեր արդյունաբերության արտադրանքը 31—32 0/0-ով: Սակայն խոստումը լրիվ չկատարվեց: 30 թվականին արդյունաբերության արտադրանքն ավելացավ 25 տոկոսով: Մենք պետք ե հարց տանք, թե նույնը չի՞ կրկնվի արդյոք այս տարի: Մեր արդյունաբերության ղեկավարներն ու աշխատողներն այժմ խոստանում են 1931 թվականին արդյունաբերության արտադրանքն ավելացնել 45 տոկոսով: Սակայն ինչո՞վ ենք ապահովված, վոր այդ խոստումը կկատարվի:

Ի՞նչ ե պետք ստուգիչ թվերը կատարելու, արտադրանքը 45 տոկոսով ավելացնելու, հնգամյակը վոչ թե 4 տարում, այլ հիմնական և վճռական ճյուղերում 3 տարում կատարելու համար:

Դրա համար անհրաժեշտ ե 2 հիմնական պայման: Նախ՝ պետք ե վոր գոյություն ունենան ռեալ կամ ինչպես ասում են մեզանում՝ «ռեյեկտիվ» հնարավորություններ:

Յերկրորդ՝ անհրաժեշտ ե, վոր ցանկություն և հմտություն լինի կառավարելու մեր ձեռնարկություններն, այնպես, վոր այդ հնարավորություններն իրականություն դառնան:

Անցյալ տարի մենք «ռեյեկտիվ» հնարավորություններ ունեյի՞նք պլանը լրիվ կատարելու: Անվիճելի փաստերը վկայում են, վոր ունեյինք: Այդ փաստերն են հետեվյալները. անցյալ տար-

վա մարտին և ապրիլին արդյունաբերութեան արտադրանքը՝ նախորդ տարվա հետ համեմատած, ավելացավ 31 տոկոսով: Հարց ե ծագում, ինչո՞ւ չկատարեցինք մենք ամբողջ տարվա պլանը, ի՞նչը խանգարեց, ի՞նչն եր պակասում: Պակասում եր այն, վոր մեմք չկարողացանք ոգտագործել գոյություն ունեցող հնարավորությունները, այն, վոր չկարողացանք միջոց դեկավարել մեր գործարանները, Ֆաբրիկաներն ու հանգները:

Մենք ունեյինք առաջին պայմանը՝ որչեկտիվ հնարավորութիւններ պլանը կատարելու համար: Սակայն մենք չունեյինք անհրաժեշտ չափով յերկրորդ պայմանը՝ արտադրութիւնը ղեկավարելու հմտութիւնը: Հենց այն պատճառով, վոր պակասում եր ձեռնարկութիւնները ղեկավարելու հմտութիւնը, պլանը թերակատար մնաց: 31—32 տոկոս աճման փոխարեն մենք տվինք միայն 25 տոկոս:

Իհարկե, 25 տոկոս անումը մեծ գործ ե: Կապիտալիստական և վոչ մի յերկիր 1930 թվականին չի ունեցել և այժմ ել չունի արտադրանքի անում: Կապիտալիստական բոլոր՝ յերկրներում, առանց բացառութեան, արտադրութիւնը նվազել ե: Այդպիսի պայմաններում 25 տոկոս անումը մեծ առաջադիմութիւն ե: Սակայն մենք կարող եյինք ավելին տալ: Մենք ունեյինք դրա համար անհրաժեշտ բոլոր «որչեկտիվ» պայմանները:

Ինչո՞ւ մենք յերաշխավորված, վոր այս տարի ևս չի կրկնվի անցյալ տարվա դեպքը, վոր պլանը լրիվ կկատարվի, վոր գոյութիւն ունեցող հնարավորութիւնները մենք կօգտագործենք այնպես, ինչպես հարկավոր ե, վոր ձեր խոստումը վորոշ չափով թղթի վրա չի մնա:

Պետութիւնների պատմութեան մեջ, յերկրների պատմութեան մեջ, բանականների պատմութեան մեջ յեղել են դեպքեր, յերբ գոյութիւն են ունեցել հաղթելու բոլոր հնարավորութիւնները, սակայն դրանք, այդ հնարավորութիւններն ապարդյուն են մնացել, վորովհետեւ ղեկավարները չեն նկատել այդ հնարավորութիւնները, չեն կարողացել օգտովել նրանցից և բանականները պարտութիւն են կրել:

### ՍԵՆՔ ՌԻՆԵՆՔ 1931 ԹՎԻ ՍՏՐԻԳԻՉ ԹՎԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1931 թվականի ստուգիչ թվերը կատարելու բոլոր հնարավորութիւններն ունենք արդյոք մենք: Այո, այդպիսի հնարավորութիւններ ունենք:

Վորո՞նք են այդ հնարավորութիւնները, ի՞նչ ե պահանջվում այդ հնարավորութիւններն իրականութիւն դարձնելու համար:

Նախ և առաջ անհրաժեշտ են բավարար չափով բնական հարստություններ՝ յերկաթահանք, ածուխ, նավթ, հաց, բամբակ: Ունենք մենք այդ:

Ունենք: Ունենք ավելի, քան վորեն այլ յերկիր: Վերցնենք թեկուզ Ուրալը, վորը ներկայացնում է հարստությունների այնպիսի բազմազանություն, վորպիսին չի կարելի գտնել վոչ մի յերկրում: Հանք, ածուխ, սղինձ, նավթ, հաց—խնչ ասես չկա Ուրալում: Մենք ամեն ինչ ունենք, թերևս բացի կաուչուկից: Սակայն մի-յերկու տարուց մենք կաուչուկի ևս կունենանք մեր տրամադրության տակ: Այդ կողմից, բնական հարըստությունների կողմից, մենք լիովին ապահովված ենք: Մեր հարստությունները նույնիսկ ավելի յեն, քան անհրաժեշտ է:

Ել ինչ է պահանջվում:

Պահանջվում է, վոր լինի այնպիսի իշխանություն, վորը ցանկություն և կարողություն ունենա ոգտագործել բնական այդ հսկայական հարստությունները ժողովրդի ոգտին: Ունենք մենք այդպիսի իշխանություն: Ունենք: Ծիշոտ է, մեր բնական հարստությունների ոգտագործման աշխատանքի ասպարիզում յերբեմն տեղի յեն ունենում բաղադրումներ մեր իսկ աշխատողների միջև: Որինակ՝ անցյալ տարի խորհրդային իշխանությունը հարկադրված էր վորոշ պայքար մղել ածխա-մետաղածուլական յերկրորդ բազա ստեղծելու հարցում, մի բազա, առանց վորի մենք չենք կարող այլևս զարգանալ: Սակայն մենք հաղթահարել ենք

արդեն այդ արգելքները: Շուտով մենք ունենալու յենք այդ բազան:

Ել ինչ է պահանջվում:

Պահանջվում է, վոր այդ իշխանությունը վայելի միլիոնավոր բանվորների և գյուղացիների ոժանդակությունը: Մեր իշխանությունը վայելում է այդ ոժանդակությունը: Այո, վայելում է: Դուք ամբողջ աշխարհում չեք գտնի մի այլ իշխանություն, վորը վայելեր բանվորների և գյուղացիների այնպիսի ոժանդակությունը, վորը վայելում է խորհրդային իշխանությունը: Յես չեմ հիշատակի սոցիալիստական մրցության աճման, հարվածայնության աճման փաստերը, հանդիպական արդիինպլանի համար մղվող պայքարը: Այդ բոլոր փաստերը, վորոնցից ակնբախ կերպով յերևում է միլիոնավոր մասսաների անվերապահ ոժանդակությունը խորհրդային իշխանությանը, հանրածանոթ են:

## ՄԵՐ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուրիշ ինչ է անհրաժեշտ 1931 թվականի ստուգիչ թվերը կատարելու և գերակատարելու համար:

Աճեցանք է նայել այնպիսի իրավակարգ, վորն ադատ լինի կապիտալիզմի անբուժելի հիվանդություններից և վորը լուրջ առավելություններ

ունենա կապիտալիզմի հանդեպ: Ճգնաժամները, գործազրկութիւնը, շռայլութիւնը և լայն մասսաների աղքատութիւնը — ահա կապիտալիզմի անբուժելի հիվանդութիւնները:

Մեր իրավակարգը չունի այդ հիվանդութիւնները, վորովհետեւ իշխանութիւնը մեր ձեռին ե, բանվոր դասակարգի ձեռին, վորովհետեւ մենք վարում ենք պլանային տնտեսութիւն, պլանաչափ կուտակում ենք ռեսուրսները և վերջիններս պլանաչափ բաշխում ենք ժողովրդական տնտեսութեան ճյուղերում: Մենք ազատ ենք կապիտալիզմի անբուժելի հիվանդութիւններից. այդ ե մեր տարբերութիւնը, այդ ե մեր վճռական առավելութիւնը կապիտալիզմի նկատմամբ: Տեսեք, թե ինչպես են ուզում դուրս գալ կապիտալիստները ճգնաժամից: Նրանք առավելագույն չափով իջեցնում են բանվորների աշխատավարձը: Նրանք մեծ չափով իջեցնում են հումուլթի և կենսամթերքների գինը: Բայց նրանք չեն ուզում քիչ թե շատ նկատելի չափով իջեցնել արդյունաբերական ապրանքների գները: Այդ նշանակում ե, վոր նրանք ուզում են ճգնաժամից դուրս գալ ապրանք սպառող հիմնական մասսաների հաշվին, բանվորների, գյուղացիների և այն յերկրների աշխատավորների հաշվին, վորոնք արտադրում են հումուլթ և կենսամթերքներ: Կա-

պիտալիստները կտրում են այն ճյուղը, վորի վրա նստած են, ուստի ճգնաժամից դուրս գալու փոխարեն վերջինս ավելի յե սաստկանում, կուտակվում են դեպի ավելի դաժան ճգնաժամ տանող նոր նախադրյալներ:

Մեր առավելութիւնն այն ե, վոր մենք չըգիտենք գերարտադրութեան ճգնաժամեր, մենք չունենք և չենք ունենա միլիոնավոր գործազուրկներ, մենք չունենք արտադրութեան անարխիա, վորովհետեւ մենք վարում ենք պլանային տնտեսութիւն: Սակայն այդ դեռ բոլորը չե: Մենք հանդիսանում ենք ամենակենտրոնացած արդյունաբերութիւն ունեցող յերկիրը: Այդ նշանակում ե, վոր մենք կարող ենք մեր արդյունաբերութիւնը հիմնել ամենալավ տեխնիկայի վրա և դրա շնորհիվ ապահովել աշխատանքի չըտեանված արտադրականութիւն, կուտակման չտեսնված տեմպ: Անցյալում մեր թուլութիւնն այն եր, վոր այդ արդյունաբերութիւնը հիմնըված եր գյուղացիական բաժան-բաժան, մանր տնտեսութիւնների վրա: Սակայն այդ առաջ եր: Այժմ այլևս այդպես չե: Վաղը, թերևս մի տարուց, մենք կդառնանք աշխարհիս ամենախոշոր գյուղատնտեսութեան յերկիրը: Մեր խորատեսութիւններն ու կոլտնտեսութիւնները — իսկ դրանք խոշոր տնտեսութեան ձեւերն են — արդեն

այս տարի տվին մեր ամբողջ ապրանքային հացահատիկի կեսը: Իսկ այդ նշանակումն է, վոր մեր իրավակարգը, խորհրդային իրավակարգը, առագորեն առաջ գնալու այնպիսի հնարավորություններն է տալիս մեզ, վորոնց մասին չի կարող յերագել բուրժուական և վոչ մի յերկիր:

Ել ինչ է պետք հսկայի քայլերով առաջ գնալու համար:

Պետք է վոր լինի այնպիսի կուսակցություն, վորը բավականաչափ համախմբված լինի, միասնական լինի, վորպեսզի կարողանա բանվոր դասակարգի, բոլոր լավագույն մարդկանց ջանքերը ուղղել մի կետի վրա և բավականաչափ փորձված լինի, վորպեսզի չվհատի դժվարությունների առաջ և սխտեմատիկորեն իրագործի բայլեմիկյան հեղափոխական ճիշտ քաղաքականությունը:

Ունենք մենք այդպիսի կուսակցություն: Այո, ունենք: Ծիշտ է նրա քաղաքականությունը: Այո, ճիշտ է, վորովհետև այդ քաղաքականությունը լուրջ հաջողություններ ունի: Այդ խոստովանում են այժմ վոչ միայն մեր բարեկամները, այլև բանվոր դասակարգի թշնամիները: Տեսեք, թե ինչպես կատարում և վայնասուն են բարձրացնում մեր կուսակցության դեմ հանրածանոթ «հարգո» ջենտլմեններ՝ Ֆիշը՝ Ամերիկայում, Չերչիլը՝ Անգլիայում, Պուանկարեն՝ Ֆրանսիայում:

Ինչու էն նրանք կատարում և վայնասուն բարձրացնում: Վորովհետև մեր կուսակցության քաղաքականությունը ճիշտ է, վորովհետև այդ քաղաքականությունը նորանոր հաջողություններ են ունենում:

Ահա, ընկերներ, այն բոլոր հնարավորությունները, վորոնք հեշտացնում են 1931 թվի ստուգիչ թվերի իրագործումը, վորոնք հնարավորություն են տալիս հնգամյակը կատարել 4, իսկ վճռական ճյուղերում նույնիսկ 3 տարում:

Այսպիսով, պլանի կատարման համար առաջին պայմանը—«ոբյեկտիվ հնարավորությունները»—մենք ունենք:

Ունենք արդյոք յերկրորդ պայմանը—այդ հնարավորություններն ոգտագործելու ունակությունը:

Ուրիշ խոսքով, մեզ մոտ կա գործարանների, ֆաբրիկաների, հանքերի ճիշտ ղեկավարություն: Արդյոք ամեն ինչ կարգին է այստեղ:

Դժբախտաբար, այստեղ ամեն ինչ կարգին չէ: Մեզ մոտ վոչ միշտ բայլեմիկորեն են նայում ձեռնարկությունների ղեկավարության հարցի վրա: Մեզ մոտ յերբեմն կարծում են, վոր ղեկավարել—դա նշանակում է թղթեր ստորագրել: Ցավալի յե, բայց փաստ է:

Յերբեմն ազամա հիշում են Շչեդրինի Պոս-

պաղուցներէն: Հիշում եք, ինչպես Պոմպադուրուհին խրատում եր ջահել Պոմպադուրին — զլուխդ մի ցավացնի գիտութեան վրա, մի թափանցի գործի խորքերը, թող ուրիշներն զբաղվեն դրանով, դա քո գործը չէ, — քո գործն է ղեկավարել, թղթեր ստորագրել: Պետք է խոստովանել, ամոթ մեզ, վոր մեր բայլշեփիկներն մեջ ել քիչ չեն ախպիսիները, վորոնք ղեկավարում են թղթեր ստորագրելու միջոցով: Իսկ գործի խորքը թափանցել, տիրապետել տեխնիկային, գործի տեր դառնալ, — այս կողմից — վոչ մի բան:

Ինչպես կարող եր պատահել, վոր մենք, բայլշեփիկներս, վոր կատարել ենք յերեք հեղափոխութիւն, հաղթանակով դուրս ենք յեկել քաղաքացիական դաժան պատերազմից, լուծել ենք արդշունաբերութիւն ստեղծելու խոշորագույն խնդիրը, գյուղացիութիւնը շրջել ենք դեպի սոցիալիզմի ուղին, — ինչպես կարող եր պատահել, վոր արտադրութեան ղեկավարութեան գործում թղթերով ենք բավականանում:

Այստեղ պատճառն այն է, վոր թուղթ ստորագրելն ավելի հեշտ է, քան արտադրութիւն ղեկավարելը. և ահա շատ տնտեսավարներ գնացին այս հեշտ ճանապարհով: Այստեղ կա նաև մեր մեղը, կենտրոնի մեղը: Տասը տարի առաջ տրվեց մի լոգունգ. «քանի վոր կոմունիստները

դեռ ևս ինչպես հարկն է չեն հասկանում տեխնիկայից, քանի վոր նրանք դեռ կարիք ունեն սովորելու տնտեսութիւն ղեկավարելը, թող հին տեխնիկներն ու ինժեներները, մասնագետները վարեն արտադրութիւնը, իսկ դուք, կոմունիստներդ, մի խառնվեք գործի տեխնիկային, բայց չմիջամտելով, ուսումնասիրեցեք տեխնիկան, ուսումնասիրեցեք անդուլ արտադրութիւնը ղեկավարելու տեխնիկան, վորպեսզի հետո մեզ նվիրված մասնագետների հետ միասին դառնաք արտադրութեան իսկական ղեկավարներ, գործի իսկական տերեր»: Այսպես եր լոգունգը: Իսկ ինչ ստացվեց իրականում: Այս ֆորմուլայի յերկրորդ մասը դեն շարտեցին, վորովհետև սովորելն ավելի դժվար է, քան թղթեր ստորագրելը, իսկ ֆորմուլայի առաջին մասը գոհակացրին, միջամտելը բացատրելով վորպես հրաժարվել արտադրութեան տեխնիկան ուսումնասիրելուց:

Ստացվեց անհեթեթութիւն, ֆլասակար, վրտանգավոր անհեթութիւն, վորից վորքան շուտ ազատվենք, այնքան լավ: Կյանքն ինքը բազմիցս ազդարարել է մեզ, վոր այդ գործն անբարեհաջող է: Առաջին ազդանշանն եր Շախտիի գործը: Շախտիի գործը ցույց տվեց, վոր կուսակազմակերպութիւնները և արհմիութիւնները հեղափոխական բավականաչափ զգոնութիւն չեն ունե-

ցել: Նա ցուլց տվեց, վոր մեր տնտեսավարները տեխնիկական տեսակետից չափազանց հետ են մնացել, վոր մի քանի հին ինժեներներ և տեխնիկներ, առանց վերահսկողութայն աշխատելով, ավելի դյուրությամբ են գլորվում դեպի ֆնաստորարութայն ուղին, մանավանդ, վոր շարունակ թրտասածմանի մեր թշնամիները «գայթակղեցնում» են նրանց իրենց «առաջարկներով»: Յերկրորդ ազդանշանը «Արդյունաբերական կուսակցութայն» պրոցեսն էր:

Իհարկե, ֆնասարարութայն հիմքն է կազմում դասակարգային պայքարը: Իհարկե, դասակարգային թշնամին կատաղի դիմադրություն է ցուլց տալիս սոցիալիստական հարձակմանը: Սակայն ֆնասարարութայն այդպիսի փարթամ ծաղկումը բացատրելու համար միայն այդ բացատրությունը քիչ է:

Ինչպես է պատահել, վոր այդպիսի լայն չափեր է ընդունել ֆնասարարությունը: Ո՞վ է մեղավոր: Մեղավոր ենք մենք: Յեթե մենք տրնտեսութայն դեկավարումն այլ հիմքերի վրա դրած լինեյինք, յեթե մենք ավելի ջանք գործադրած լինեյինք տեխնիկան ուսումնասիրելու, տեխնիկային տիրապետելու գործի վրա, յեթե մենք ավելի հաճախ և ավելի խելացի կերպով միջամտեյինք տնտեսութայն դեկավարմանը, ֆնասարարներին չեր հաջողվի այդքան ֆնաս տալ:

## ԺԱՄԱՆԱԿՆ Ե ՄԵՐ ՅԵՐԵՍԸ ԴԱՐՁՆԵԼ ԴԵՊԻ ՏԵԽՆԻԿԱՆ

Պետք է, վոր մենք ինքներս մասնագետ դառնանք, գործի տերը դառնանք, անհրաժեշտ է, վոր մեր յերեսը դարձնենք դեպի տեխնիկան, դեպի տեխնիկական դիտելիքները — ահա թե ուր է մղում մեզ կյանքը: Սակայն վոչ առաջին և վոչ ել յերկրորդ ազդանշանը, դեռ անհրաժեշտ շրջադարձ չստեղծեց: Ժամանակ է, վաղուց ժամանակ է մեր յերեսը դարձնել դեպի տեխնիկան:

Ժամանակ է, վոր մենք հրաժարվենք հին լոգունգից, մեռած լոգունգից՝ տեխնիկային չըխառնվելու մասին և դառնանք գործի հմուտ մասնագետները, ինքներս դառնանք գործի լիակատար տերն ու տիրականը:

Հաճախ հարց են տալիս, թե ինչու չկա կառավարման միանձնյա սիստեմ: Չկա և չի կարող լինել, մինչեւ վոր մենք չտիրապետենք տեխնիկային: Մինչև վոր մեր, բալլչեվիկներին մեջ չլինի տեխնիկայի, եկոնոմիկայի և ֆինանսների հարցերին լավ ծանոթ բավարար թվով մարդ, մեզանում իսկական միանձնյա սիստեմ չի լինի: Վարքան ուզեք բանաձևվեր գրեք, ինչ խոսքերով ուղղում եք յերդվեցեք, բայց յեթե դուք չեք տիրապետի գործարանի, հանքահորի տեխնիկային,

եկոնոմիկային և ֆինանսներին—բան դուրս չի գա, միանձնյա սիստեմ չի լինի:

Հետեւապես խնդիրն այն է, վոր մենք ինքներս տիրապետենք տեխնիկային, ինքներս դառնանք գործի տերն ու տնօրենը: Միմիայն այդ է յերաշխիք տալիս, վոր մեր պլանները լիովին կիրադործվեն և միանձնյա սիստեմը կկենսագործվի:

Իհարկե դա հեշտ գործ չէ, սակայն միանգամայն հաղթահարելի: Գիտությունը, տեխնիկական փորձը, գիտելիքները—այս բոլորը հնարավոր է ձեռք բերել աշխատանքով: Այսօր չկա, վաղը կլինի: Այստեղ գլխավորն այն է, վոր մենք բայլընվիկյան բուռն ցանկություն ունենանք տեխնիկային տիրապետելու, գիտությունն ու աբտադրությունը նվաճելու: Բուռն ցանկություն ունենալով, կարելի չէ հասնել ամեն ինչի, կարելի չէ հաղթահարել ամեն ինչ:

ԿԱՍ ՄԱՀ, ԿԱՄ ՀԱՍՆԵԼ ՅԵՎ ԱՆՑՆԵԼ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ

Յերբեմն հարցնում են, թե չի՞ կարելի արդյոք մի բիչ դանդաղեցնել մեր տեմպը, մի փոքր թուլացնել մեր շարժումը: Վոչ, ընկերներ, չի կարելի: Զի կարելի թուլացնել տեմպը: Ընդհակառակը, քստ մեր ուժերի և հնարավորություն-

ների, պետք է ավելացնել: Այդ են պահանջում ԽՍՀՄ-ի բանվորների և գյուղացիների հանդեպ մեր ստանձնած պարտավորությունները: Այդ են պահանջում մեզանից ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի առաջ մեր ստանձնած պարտավորությունները:

Դանդաղեցնել տեմպը նշանակում է հետ մնալ: Իսկ հետ մնացողներին հարվածում են: Սակայն մենք չենք ուզում, վոր մեզ հարվածեն: Վոչ, չենք ուզում: Հին Ռուսաստանի պատմությունն այն է, վոր նրան անընդհատ հարվածում էին հետամնացության համար: Հարվածում էին մոնղոլական խաները: Հարվածում էին թրքական բեկերը: Հարվածում էին շվեդական ֆեոդալները: Հարվածում էին լեհ-լիտվական պաները: Հարվածում էին տոգլո-ֆրանսիական կապիտալիստները: Հարվածում էին յապոնական բարոնները: Ամենքը հարվածում էին հետամնացության համար: Ռազմական հետամնացության համար, կուլտուրական հետամնացության համար, պետական հետամնացության համար, արդյունաբերական հետամնացության համար, գյուղատնտեսական հետամնացության համար: Հարվածում էին, վորովհետև այդ ձեռնառու յեր և անպատիժ եր անցնում: Հիշում եք մինչհեղափոխական բանաստեղծի հեռեյալ խոսքերը. «Դու և խեղճ ես,

և՛ լիառատ, դու և՛ հզոր ես, և՛ անզոր ես, մայր իմ Ռուսաստան»։ Հին բանաստեղծի այս խոսքերը լավ են սովորել այդ պարոնները։ Նրանք խփում եյին և ավելացնում. «դու լիառատ ես» — ուրեմն կարելի յե ոգտվել քեզանից։ Նրանք խփում եյին և ավելացնում. «դու խեղճ ես և անզոր», ուրեմն կարելի յե խփել և անպատիժ կողոպտել։ Այդպես ե շահագործողների որենքը՝ խփել հետամնացներին և թուլյերին։ Կապիտալիզմի դայրի որենքը։ Դու հետ ես մնացել, դու թուլ յես, նշանակում ե դու արդարացի չես, հետեապես քեզ կարելի յե խփել և ստրկացնել։ Դու հզոր ես — նշանակում ե դու արդարացի յես, հետեապես քեզնից պետք ե զգուշ լինել։

Ահա թե ինչու մեզ չի կարելի այլևս հետ մնալ։

Մնցյալում մենք հայրենիք չունեյինք և չեյինք կարող ունենալ։ Բայց այժմ, յերբ մենք տապալել ենք կապիտալիզմը և մեր իշխանությունը բանվորական ե, մենք հայրենիք ունենք և պիտի պաշտպանենք նրա անկախությունը։ Ուզում եք, վոր հարվածեն մեր սոցիալիստական հայրենիքը, վոր նա կորցնի իր անկախությունը։ Յեթե չեք ուզում, ապա պետք ե ամենակարճ ժամանակամիջոցում վերացնենք նրա հետամնացությունը և իսկական բայլեյիկյան տեմպ կիրառենք նրա սոցիալիստական տնտեսության

պարզացման ասպարիզում։ Այլ ճանապարհ չկա։ Ահա թե ինչու Հենրիը Հոկտեմբերի ժամանակ ասում եր. «Կամ մահ, կամ հասնել և գերազանցել կապիտալիստական առաջավոր յերկրներին»։

Մենք 50—100 տարով հետ ենք մնացել առաջավոր յերկրներից։ Այս տարածությունը մենք պետք ե անցնենք 10 տարում։ Կամ կանենք այդ, կամ մեզ կճգմեն։ Ահա թե ինչ ե թելադրում մեզ իՍՅՄ-ի բանվորների և գյուղացիների հանդեպ մեր ստանձնած պարտավորությունը։

#### ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆ Ե

Սակայն մենք ունենք ուրիշ, ավելի լուրջ և ավելի կարևոր պարտավորություններ։ Նրանք՝ համաշխարհային պրոլետարիատի առաջ մեր ստանձնած պարտավորություններն են։ Վերջիններիս դուզադիպում են առաջին տեսակի պարտավորությունների հետ։ Սակայն վերջիններս մենք ավելի բարձր ենք դասում, իՍՅՄ-ի բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն ե։ Մենք հաղթեցինք վոյ միայն իՍՅՄ-ի բանվոր դասակարգի ջանքերով, այլև համաշխարհային բանվոր դասակարգի ոժանդակությամբ։ Առանց այդ ոժանդակության վաղուց բզկտած կլինեյին մեզ։ Ասում են, թե մեր յերկրը բոլոր յերկրների պրոլետարիատի հարվա-

ժային բրիդադն ե: Լավ ե ասված: Ինչո՞ւ յե  
պաշտպանում մեզ միաջագգային պրոլետարիատը,  
ինչո՞վ ենք արժանացել այդ պաշտպանությանը:  
Նրանով, վոր մենք առաջինը կռվի նեպոլեոնի  
կապիտալիզմի դեմ, մենք առաջինը հաստատե-  
ցինք բանվորական իշխանություն, մենք առաջինը  
սկսեցինք սոցիալիզմը կառուցել: Նրանով, վոր  
մենք կատարում ենք այնպիսի գործ, վորը հա-  
ջողության դեպքում շուռ կտա ամբողջ աշխար-  
հը և կազատագրի ամբողջ բանվոր դասակարգը:

Ի՞նչ ե անհրաժեշտ հաջողության համար:  
Վերացնել մեր հետամնացությունը, զարգացնել  
շինարարության բարձր, բայլշեվիկյան տեմպ:  
Մենք պետք ե այնպես առաջ գնանք, վոր ամ-  
բողջ աշխարհի բանվոր դասակարգը, մեզ վրա  
նայելով, կարողանա ասել. «Ահա նա, իմ առա-  
ջավոր ջոկատը, ահա իմ հարվածային բրիգադը,  
իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ  
հայրենիքը: Նրանք իրենց գործը, մեր գործը,  
լավ են կատարում, ոգնենք նրանց կապիտալիստ-  
ների դեմ և հրահրենք համաշխարհային հեղափո-  
խությունը»: Մենք պետք ե արդարացնենք բան-  
վոր դասակարգի հույսերը, կատարենք մեր պար-  
տավորությունները նրանց հանդեպ: Այո, պետք ե  
արդարացնենք, յեթե չենք ուզում վերջիվերջո  
խայտառակվել:

Մրանք են մեր պարտավորությունները: Դուք  
տեսնում եք, վոր այդ պարտավորությունները  
զարգացման բայլշեվիկյան տեմպ են թելադրում  
մեզ:

Յես չեմ ասում, վոր տեսնությունը դե-  
կավարելու ասպարիզում այս տարիները մենք  
վոչինչ չենք արել: Արել ենք, և նույնիսկ շատ  
բան ենք արել: Մենք մինչպատերազմյանի հետ  
համեմատած. արդյունաբերության արտադրանքը  
կրկնապատկեցինք: Մենք ստեղծեցինք ամենա-  
խոշոր գյուղատնտեսական արտադրությունն աշ-  
խարհում: Սակայն մենք ավելի գործ կատարած  
կլինեյինք, յեթե այդ ժամանակամիջոցում աշ-  
խատեյինք իրոք տիրապետել արդյունաբերու-  
թյանը, նրա տեխնիկային, նրա ֆինանսական-  
տնտեսական կողմին:

Առ առավել 10 տարվա ընթացքում մենք  
պետք ե կտրենք այն տարածությունը, վորով հետ  
ենք մնացել կապիտալիզմի առաջավոր յերկրնե-  
րից: Իրա համար մենք ունենք բոլոր «ոբյեկտիվ»  
հնարավորությունները: Պակասում ե միայն այդ  
հնարավորությունները պատշաճ կերպով ոգտա-  
գործելու հատուկությունը: Իսկ այդ կախված ե մեզա-  
նից և միմիայն մեզանից: Ժամանակ ե, վոր մենք  
սովորենք ոգտագործել այդ հնարավորություն-  
ները: Ժամանակ ե, վոր մենք վերջ ա



ԱԳԶ

3121

դրութեանը չմիջամտելու ներքին  
ժամանակ ե յուրացնել մի ուրիշ  
համապատասխան, նոր դիրքա-  
ման բանի: Յեթե դու գործարանի դիրեկտոր  
ես, միջամտիր բոլոր գործերին, թախանցիր նրա  
բոլոր անկյունները, սովորիր, և դարձյալ սովո-  
րիր: Բայլ շեմիկները պետք ե տիրապետեն տեխ-  
նիկային: Ժամանակ ե, վոր բայլ շեմիկներն իրենք  
մասնագետներ դառնան: Վերականգնման շրջա-  
նում տեխնիկան լուծում ե ամեն ինչ: Յեվ տեխ-  
նիկան ուսումնասիրել չուզող, տեխնիկային տի-  
րապետել չուզող տնտեսավարը ծիծաղ ե և վոչ  
տնտեսավար:

Ասում են, թե դժվար ե տիրապետել տեխ-  
նիկային: Այդ սխալ ե: Չկա այնպիսի բերդ, վոր  
չկարողանան նվաճել բայլ շեմիկները: Մենք լու-  
ծել ենք մի շարք ամենադժվար խնդիրներ, մենք  
տապալեցինք կապիտալիզմը: Գրավեցինք իշխա-  
նությունը, կառուցեցինք խոշորագույն սոցիա-  
լիստական ինդուստրիան: Միշակ գյուղացուն  
շրջեցինք դեպի սոցիալիզմի ուղին: Շինարարու-  
թյան տեսակետից ամենակարեւորը մենք արդեն  
արել ենք: Մեզ քիչ բան ե մնում՝ ուսումնասիրել  
տեխնիկան, տիրապետել գիտությունը: Յեվ յերբ  
այդ անենք, մեզանում կլինեն այնպիսի տեմ-  
պեր, վորոնց մասին ենք ել համարձակվում յե-  
րազել: Յեվ մենք ինչն ենք օգտ, յեթե ցանկա-  
նանք իսկապես:

